

5.3. Ժամանակավոր անաշխատունակության, դժբախտ պատահարների և արտադրական վնասվածքների մասին

Ըստ հանրապետության կազմակերպություններում աշխատանքային գործունեության ընթացքում ժամանակավոր անաշխատունակության, դժբախտ պատահարների և վնասվածքների վերաբերյալ ստացված վիճակագրական հաշվետվությունների ամփոփ տվյալների, աշխատանքի անվտանգության նորմերի խախտման պատճառով 2000թ. 62 աշխատողներ ստացել են տարբեր տեսակի մարմնական վնասվածքներ ու մեկ և ավելի օրով դարձել անաշխատունակ: 1999թ. համեմատ այդ ցուցանիշը նվազել է 75.7%-ով (1999թ.՝ 255 աշխատող): 1000 աշխատողի հաշվով /այս և հետագա հաշվարկներում աշխատողների թվաքանակը հաշվարկված է ըստ ներկայացված հաշվետվություններում բերված աշխատողների միջին ցուցակային թվերի/ տուժածների տեսակարար կշիռը կազմել է 0.4 1999թ. 1.5-ի դիմաց: Տուժածներից 2-ը կամ 3.2 %-ը կանայք են: Աշխատանքի անվտանգության նորմերի խախտման հետևանքով տուժածների 11.3%-ը կամ 7 մարդ մահացել է: Մահացության 3-ական դեպք արձանագրվել է Երևան քաղաքում և Սյունիքի մարզում, 1-ը՝ Արագածոտնի մարզում:

Աշխատանքային գործունեության ընթացքում դժբախտ պատահարները բնութագրող ցուցանիշները

		(մարդ)	
		1999	2000
Աշխատանքային գործունեության ընթացքում դժբախտ պատահարներից տուժածների թվաքանակը	ընդամենը	255	62
	այդ թվում՝ կանայք	32	2
այդ թվում՝ դժբախտ պատահարների հետևանքով մահացածների թվաքանակը	ընդամենը	5	7
	այդ թվում՝ կանայք	1	0

2000թ. հանրապետությունում արձանագրված 58 դժբախտ պատահարներից 18-ը կամ 31.0%-ը բաժին է ընկել Երևան քաղաքին, 22-ը կամ 37.9%-ը՝ Սյունիքի, 8-ը կամ 13.8%-ը՝ Կոտայքի, 6-ը կամ 10.3%-ը՝ Արարատի, 1-ական դեպք կամ 1.7%-ը՝ Շիրակի և Լոռու մարզերին: Ընդ որում, Լոռու մարզում 1 դժբախտ պատահարի հետևանքով միաժամանակ տուժել են 3 մարդ, Արագածոտնի մարզում 2 դժբախտ պատահարի հետևանքով՝ 4 մարդ:

Հանրապետությունում դժբախտ պատահարներից 7-ը տեղի է ունեցել աշխատանքի գնալու ճանապարհին, որի արդյունքում տուժել են 2 կին, իսկ 6-ը տեղի է ունեցել աշխատանքից տուն վերադառնալու ճանապարհին: Դժբախտ պատահարների հետևանքով 6 մարդ դարձել է հաշմանդամ, ընդ որում նրանցից 2-ը՝ երկրորդ կարգի: Աշխատունակությունը 1 և ավելի օրով կորցրած անձանց, որոնց ժամանակավոր անաշխատունակությունն ավարտվել է հաշվետու տարում, անաշխատունակ մարդ-օրերի գումարային քանակը կազմել է 3.1 հազ. մարդ-օր /1999թ.՝ 5.4 հազ. մարդ-օր/: Աշխատունակությունը մասամբ կորցրած 1 և ավելի աշխատանքային օրով հիմնական աշխատանքից այլ աշխատանքի է փոխադրվել ընդամենը 3 մարդ:

5. ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Արտադրական վնասվածքներից տուժածների բաշխվածությունն ըստ մարզերի

(մարդ)

	Արտադրական վնասվածքներից տուժածների թվաքանակը		%–ով ընդհանուրից		Արտադրական դժբախտ պատահարներից մահացածների թվաքանակը, ընդամենը
	ընդամենը	նրանցից՝ կանայք	ընդամենը	նրանցից՝ կանայք	
Ընդամենը	62	2	100	100	7
Երևան	18	1	29.0	50.0	3
Սյունիք	22	1	35.5	50.0	3
Կոտայք	8	0	12.9	0	–
Արարատ	6	0	9.7	0	0
Արագածոտն	4	0	6.5	0	1
Շիրակ	1	0	1.6	0	–
Լոռի	3	0	4.8	0	–

Հանրապետությունում աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման ծախսերը, որը տրվում է տուժողին կամ տուժողի մահվան դեպքում դրա իրավունքն ունեցող անձանց, կազմել է 113.6 մլն. դրամ, որից՝ ժամանակավոր անաշխատունակության նպաստները՝ 100.6 մլն. դրամ, միանվագ նպաստները՝ 988.9 հազ. դրամ, բժշկական, սոցիալական և մասնագիտական վերականգման ծախսերը՝ 239.4 հազ. դրամ:

Աշխատանքի պահպանման կոլեկտիվ պայմանագրի (համաձայնագրի) համաձայն աշխատանքի պահպանման միջոցառումների վրա ծախսված գումարը կազմել է 402.5 մլն. դրամ, այդ թվում՝ հատուկ արտահագուստի համար՝ 213.1 մլն. դրամ, անհատական պաշտպանության միջոցառումների վրա՝ 35.6 մլն. դրամ: